

Իշխանուհին (Արկայի զբոսը) 6 հազար և ամանութեանը անկն՝ 30 հազար: Քօն- նոթի զուգը՝ 25 հազար: Պեթրիս իշխա- նուհին (Պաթենգրիկի Հէրի իշխանուհին) 6 հազար և ամանութեանը ատեն՝ 30 հազար: Ազգանի գուբին այրին՝ 6 հազար: Համագումար 174 հազար ոսկի զոր Անգ- լիս ամեն տարի կը վճարէ արքայական գերդատանին անդամներուն. նաև անսոց ամանութեան ատեն 200 հազար ոսկի ստեւած է: Եթէ Վիքթորիա թագուհին օ- րով հաստատեւած այդ բանակութիւնը ըն- դունտի, Երես. ժողովը Լատուար թագա- լորին գաւակնեալն համար 68 հազար ոս- կիի յաւելուածական տարեթոշակ մը սխալի բուժարկէ սա բաժանումով. — Երբի ու ֆորնուայի դուքսին համար 40 հազար ոս կի, դրոնիսին համար՝ 10 հազար և 6 հազարական երեք աղջիկներուն՝ Յայֆի գրասէնն, Վիքթորիա իշխանուհին և Տա- նիմարայի ֆարը իշխանուհին:

ՅԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ
Մանչուրիայի խնդրոյն մէջ պետութեանց բանած ուղղութիւնը հետեւեալ կերպով կը բացատրէ Բորիսի Բօսթի Վալիսկի թղթակցը:

Անգլիոս սկզբնաժամը կընդունի թէ, Մի- այեալ Նահանգներու ատաջարկութեան համեմատ, Երկնային Աստուծոյն պէտք չէ մասնաւոր բանակցութիւններ կատարել այս կամ այն պետութեան հետ և չզիտցուի թէ անգլիական զաւթիքը մինչև ուր պիտի երթնայ իր այս որոշումը յարգել տարու համար:

Յարման զեռ որչաք քաղաքականութեան մը չի հետնիր, բայց կը կարծուի թէ Ռու- սիոս պիտի համաձայնի:

Գերմանիոյ փախուսի թէ, թէ, պէտք կարելի է, զամեն չափով տեղ տալ Ռուսիոյ, բայց միևնոյն ատեն կ'զգուշանայ հակառակիլ Չորին բաղադրականութեան, որուն հետ ունեցած առևտրական յարաբերութիւննե- րուն մնաս մը պատճառով չուզեր:

ՍՊԱՆՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԸ
Վկանտ որ անցեալ շարժի Գերմա- նիոյ Առյուսեր զմասն երկամի կտոր մը

ԱԶԳԱՅԻՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ

(Շար. Ոստիւր թիւ 11)

Այսպիսի պարագայի մէջ Ազգային ժո- ղով կը գումարուի. Եւ եթէ եկած ամբաս- տանութիւնը քննուելով հիմաւոր ըլլալը ըս- տագոյն, Ընդհանուր Ժողովը՝ վեցերորդ յօդուածին մէջ կոտորակաւ պարտադրեալ Պատ- րիարքին վերաբերեալ տրամադրութեանց համեմատ՝ բոս պահանջներն իրեն, կամ ի կանոնապահութիւն կը հրատարակ զՊատ- րիարքին մասնաւոր բողոքագրով, և կամ կը պարտաւորէր զայն հետեւեալ Պատրիար- քական անձանց, և անոր պաշտօնը կը յանձնէ Տեղապահի մը՝ զոր Ընդհանուր Ժողովը գաղտնի ճակարկութեամբ կ'ընտրէ Միաբանութեան մէջէն:

Յօդ. 20. Երբ Ս. Երուսաղէմի Պատ- րիարքը վախճանի, Միաբանութիւնը իր մե- ջին Տեղապահ մը կ'ընտրէ, և Ազգային Ժողովները կը հաստատեն զայն:

Յօդ. 21. Ս. Երուսաղէմի Պատրիար- քը կոտորակաւ պարտադրեալ Ազգային Ժողովնե- րուն կողմէն կ'ընտրուի: Բայց Միաբանու-

նեանց, հարցաբնութեան ենթարկուելով հաստատուեցաւ թէ խելիք պակասութենէ զրոյում արդ փորձը ըրած է և թէ պա- տասխանատու չէ իր այդ երեւոյնական արտը- ղին:

Գատարանը սրտած է յիմարանցի մը մէջ զարմանել տալ զինք, խիտ հոկոյու- թեան տակ:

ԱՆԳԼՈՅ ԹԱԳԱՌՈՐԻՆ ԵՐԿՈՒՄԸ
Պ. Վիլիէմ Ռ. Թոմսոնի յարուցած առար- կութեան անստիպելի, խոհարարանք որոշած է թագաւորական երզուտի բանակին մէ- ջէն վերցնել այն պարբերութիւնները որոնք ուղղակի Վաթիկանէն զէմ Լատուսներ են:

Նոյն խի թողարկուող համաժամ է այդ բարեփոխումն:

Պ. ՊՕՎՈՒՆՈՅ
Ռուսիոյ Հանրային կրթութեան նախա- րար Պ. Պոլոզնով ար անցեալ շարժի ուսանողի մը կողմէ վիրաւորուած էր, ուն տոյս 16ին մեռաւ ի Ս. Ռեզրպուրկ:

ԸՆԿԵՐՈՒՄ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԻՌՈՒՄԻՍ
Մուսոնի կը հետադրեն թէ ընկերվարու- կան շարժումը երթալով ծանր կերպարանք մը առնելու մընչ է. շատ մը գործարարներ ուսանողներու միտնալով պատնէշներ շինած են փողոցներու մէջ և խորտակած են Վեր- կիտ Մեծ Գրքին պալատան տակիները: Քօղոք զինտրներ միջամտած են. երկու կողմ թաղամիջ վիրաւորուածներ զբու- նուած են:

Մուսոն, Քիլի, Խարով և Օտուս պաշար- ման վիճակի մէջ զրուած են:

Վրասի թէ Թօրիոյ Ասուր, որուն բանա- զրուիլը աւելի սաստկացայ իր ժողովրդու կանութիւնը, շտտ գործօն զեր մը ստանձած է այս շարժումներուն մէջ:

ՅԱՐԱԾ ՕՐ
Յ՝ ԱԼՓԻԱՐԻ
“ՍԵՒ ԱՆԱԿՆԿԱԸ,”

Թիւնը իրաւունք ունի իր կարծիքը յայտ- նելու ընտրելեաց արձանաւորութեան տո- ախձանին վրայ՝ Անկախացումն ցուցա- կաւ մի: Պատրիարքին վախճանելն ան- միջապէս ետք՝ յիշեալ Տեղապահը Միա- բանից Ընդհանուր Ժողով կը գումարէ: Այս Ժողովը անուանց ցուցակ մը կը պատ- ըստով կ'առանձնաւորայ Պատրիարքի ընտ- րութեան համար կոտորակաւ պարտադրեալ Եկե- ղեցական համագումար ժողովոյն ըրած կեր- պիւր. բայց պէտք է որ Միաբանութեան ներկայացուցիչը այս ցուցակը գոն և եթէ ընտրելեաց անուն պարունակէ: Այս ցու- ցակը միաբանութեան կողմէն օտարողրեալ յայտագրով կոտորակաւ պարտադրեալ Պատրիար- քարան կ'ուղարկուի:

Յօդ. 22. Ս. Երուսաղէմի Պատրիարք ընտրուելու անձը գոն և երեսուն և հինգ տարին լրացուցած, և ի ծնէ Օսմանեան Տերութեան հպատակ, Միաբանութեան Ե- պիսկոպոսներն կամ Վարդապետներն պէտք է ըլլայ. միանգամայն Միաբանութե- նն զատուած մէկը պէտք չէ ըլլալ:

Միաբանութիւնն զատուած չեն համար- ուիր այն անձինքը՝ որ Պատրիարքանի Ժո- ղովոց կողմէն ազգային պաշտօնի մէջ զոր- ծածուած են: Երուսաղէմի Պատրիարքին հասանութեամբ:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Խաղվին հօրեղբայր, Բրէնա Հի- սէյին փաշա Քամէլ որ ամիսներէ ի վեր Եւրոպա կը գտնուէր, վազը Գա- հիրէ կ'ուպատուի:

— Տարիս Սանիէյի անցեալ տար- ուան հատոյթները սովորականէն 3,000 ոսկի աւելի ըլլալուն այդ գու- մարը վարչութեան պաշտօնէից բաշ- խուած էր:

Այս տարի 10,000 ոսկի պիտի բաժնուի այդ բաղաւոր պաշտօնեա- ներուն:

— Տաճկական «Արաւն» շքեհնարը երէկ Բօն-Սայիտ հասաւ: Այդ շք- քեհնարին մէջ 1,300 թուրք զինտրներ կան որ Եթէմէն կը զրկուին:

— Եթէմէնի վալին, Միւնիւր բաշա և կինը, երէկ Աղեքսանդրիայէն ճամ- բայ ելան դէպի Պօլիս:

— 1382 նոր իսլամ ուխտաւորներ Սիւէզի ջրանցքէն անցած են դէպի Մէքքէ:

— Թագուհին մահուան առթիւ՝ Անկիւ-Ամերիկեան հիւանդանոց մը հաստատելու նպատակով բացուած հանգանակութեան գումարը 10,000 ոսկի կը հասնէր մինչև երէկ:

— Իոմայիլ Քէմալ պէյ՝ երէկ այ- ցելութիւն տուաւ Բրէնա իպրահիմ Հիլմի փաշային և Նազը հանրմին:

— Պօղոս փաշա Նուպար երկու օրէ ի վեր Աղեքսանդրիա կը գտնուի:

— Հանրօգուտ շինութեան նախա- րութեան պաշտօնեաներէն Տիար Լե- ւոն Բամպուրեքեան, նախարարական որոշմամբ Չիֆթէ զրկուած է որ այդ տեղ կատուցուելիք պարտաժե շինու- թեան հսկող վարչութեան մէջ կա- րեւոր պաշտօն մը պիտի ստանձնէ:

— Վերջերս կառավարութեան կող- մէ աւանդներու վրայ փոխատուու- թիւններու մասին հաստատուած օրէն- քը՝ խառն Դատարաններու կողմէ վա- ւերացուած ըլլալով, երէկուցն է բա- կոնալ գործադրութեան մտած է:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոն, 18 Մարտ. — «Թայմզ» Բէ- քինէ ստացած անգլիկութիւններուն հա- մեմատ, Ռուսիա եւ կեցած է Մանկո- լիոյ և Թուրքիստանի վրայ ունեցած պահանջներէն և խօսաւորուած է սեղ- մել Մանչուրիի մէջ ունեցած իր վար- չական իրաւասութիւնները. առկայ առաջին զիջողութիւնն է որ Ռուսիա կընէ Անգլիոյ նաւատորմին Բօն-Ար- թիւրէն մեկնելուն ի վեր:

Անգլիական մամուլը լարջ խորհր- ղածութիւններ կընէ Թիէն-Չինի ծա- նրը կացութեան վրայ և կը խրատէ կոտորութեան չնկրկիլ այդ դրժ- ուարութեանց հարգաւ. թէ և լրագիր- ները մեզմ կերպիւ կը զրեն, բայց «Սթատուրտ» բացէ ի բաց Ռուսիոյ զիտել կուսայ թէ պէտք չէ մտնալ անգլիական նաւատորմի մը զոյու- թիւնը:

Թիէն-Չին. 19 Մարտ. — Քառա- սուն Յրանաացի զինտրներ որ խոտ- վութիւններ կը յարուցանէին, ձեր- բակալուցանու յաղաղութիւնը վերա- հաստատուած է:

Անկիւ-Ռուս միջադէպը ծանր հե- տեանք մը չունեցաւ. այս առթիւ կըսեն թէ, Չինացիները յատկապէս Ռուսիոյ տուած են երկամուղի մեծա- շնրհներ, և այսպէսով կը կարծեն Անգ- լիոյ և Ռուսիոյ մէջ գծաւթիւննե- րու ծննդն:

Լոնտոն, 19 Մարտ. — Անգլիացիք ալ Յուրիս զօրավարի բանակը շըր- ջապատած են Օրանի մահմաննե- րուն վրայ և կը կարծուի թէ պօ- էր զօրավարը պիտի ստիպուի անձ- նատուր ըլլայ:

Լորտ Գիւններ ինչ ինչ միջոցներու գործադրութիւնը պահանջած է՝ Հա- բաւային Ափրիկէի մէջ մտաւորաւ ձը- մեռուան միջոցին զինտրներու վիճա-

Յօդ. 23. Կրօնական և քաղաքական Ժողովները Խոսն Ժողով կազմելով, վե- րոյիշեալ ցուցակին մէջ յիշատակուած ան- ձանց արձանիքը կը քննեն, և երեք ընտ- րելի որոշելով անունները Ընդհանուր Ժո- ղովոյն կը ներկայացնեն: Միաբանութեան կողմէն եկած ցուցակն ալ Ընդհանուր Ժո- ղովոյ որահին մէջ կ'առնուած կ'ըլլայ:

Ընդհանուր Ժողովը ընտրելեաց վրայօք թէ Միաբանութեան և թէ Ազգային երկու Ժողովոց կարծիքը իմանալով, անոնց մե- ջէն կրօնից, օւսման և բարի վարուց նը- կատամբ ամեն և աւելի արժանաւորութիւն ունեցող անձը կ'ընտրէ՝ գաղտնի ճակար- կութեամբ և քուէից բացարձակ առանկու- թեամբ:

Ընդհանուր Ժողովոյ մէջ Միաբանու- թեան կողմէն ներկայացուած ցուցակէն զարտ անձի վրայ ճակարկութիւն չկրնար ըլլալ:

Դ. ԱԶԳԱՅԻՆ ԿՐԾՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 24. Կրօնական Ժողովը կը բաղ- կանայ առան և չորս բանիւրուն եկեղեցա- կաններէ, որոնք գոն և երեսուն տարին լրացուցած, և զէթ հինգ տարիէ ի վեր ձեռնադրուած պիտի ըլլան:

Յօդ. 25. Եկեղեցական համագումար

ժողովը գաղտնի ճակարկութեամբ՝ Ազգային կրօնական Ժողովոյ անդամաց թաւոյն ետ- պատիկը կ'ընտրէ, և ընտրելեաց անուն- ները ստորագրեալ յայտագրով Ազգային Ընդհանուր Ժողովոյն կը ներկայացնէ:

Ընդհանուր Ժողովն ալ անոնց մէջէն գաղտնի ճակարկութեամբ կ'ընտրէ կրօնա- կան Ժողովոյ անդամները: Տեղեկագիրը Պատրիարքին կողմէն Բարձրագոյն Դրան կը ներկայացուի. և կրօնական Ժողովոյ այսպէս ընտրուած ընդամենը կայսերական հրամանաւ կը հաստատուին:

Յօդ. 26. Կրօնական Ժողովը երկու տարին անգամ մը պարիլի վերջը ամբողջ կը լուծուի, և մայիսի սկիզբը կը նորոգ- ուի: Այս Ժողովոյ անգամները անմիջապէս վերընտրելի չեն. բայց երկու տարի ետքը կրնան նորէն ընտրուիլ:

Յօդ. 27. Երբ կրօնական Ժողովոյ ան- գամներէն հրաժարական տուող և կամ օւ- թիշ պատճառաւ պակասներուն թիւը երեքէ հասնի, անոնց տեղ ուրիշներ կ'ընտրուին Ընդհանուր Ժողովով: Բայց մինչև որ այս ընտրութիւնն ըլլայ, կրօնական Ժողովոյ մէջ բոլոր անդամաց մեծագոյն մասը կը փնտաուի:

Յօդ. 28. Կրօնական Ժողովոյ պաշտօնն և Ազգային կրօնական գործոց ընդհանուր

կին գժուարութիւնները մեղմացնելու համար:

Թագաւոր այս օր ընդունեց լուր օտար տէրութեանց դեսպաններէր: Ս. Բեդրսկի, 19 Մարտ. — Նոր ցոյցեր տակ ունեցան այս օր. և 700ի մօտ ձերբակալութիւններ կը զան:

Քեթրստը, 19 Մարտ. — Հինգ նոր ժանտախտի դէպքեր պատահեցան անգլիական բանակին մէջ:

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Յառաջիկայ Հինգշաբթի 28 մարտ, Վարիկի թատրոնին մէջ, Պարոն Բիէրանթոնի լարախաղաց ընկերութեան կողմէ չքեղ ներկայացում մը պիտի արուի ի նպատակ զիջելու ինչ որ զաստիասութեանց հաստատման:

Այս բարենպատակ երկոյթը կազմակերպուած է «Նոր-Օր»ի նախաձեռնութեամբ և սիրելի է յուսալ որ փայլուն յաջողութիւն մը պիտի ունենայ:

Այդ ներկայացման յայտագիրը պիտի երևի մեր շաբաթ օրուան թուին մէջ:

Տոմարները այժմէն կը ծախուին Շարա-Ապտիկ Աղիկ Պ. կարապետ Երզնկացեանի խանութը:

Օրեակներն. 150 դրուշ.
Թիկնարոտ. 20 դրուշ.
Վերնաճարն. 8 դրուշ

ԹՈՎԱՍ ՓԱՍՏԻԿԱԿԱՆ

Ասկէ 6իշ բառուն տարի առաջ, 1864-ին, Պոլսոյ Արեւելեան թատրոնին բեմին վրայ «Թուլիքի աւագակապտը» անուն թատերգութիւն մը կը արուէր որուն մէջ Ռազմանի դերը յանձնուած էր կայտատ, գեղարէմ, աշխարհ երիտասարդի մը:

Այդ նոր դերասանը, որ իր ճեպիւն կ'ընէր այդ գիշեր, այնքան շատ հաւնուած, այնքան շատ ծափահարուած էր որ հետեւեալ օրը՝ Թովմաս Թեղեանի ոտանաւորով մը իր գովեստը կ'ընէր այն ատենուան «Մասիս»ին մէջ և մեծ դերասանի մը յայտնութիւնը կ'ընէր հանրութեան:

տեսութիւնը: Իր պարտաւորութիւնքն են՝ Աղիկն մէջ կրօնական գրաստանը զարգացնել, Հայաստանեայց եկեղեցւոյ դատարանին ու ասանդութիւններն անխախտ պահել, Եկեղեցեաց և Եկեղեցականաց բարեկարգութեանը հսկել, Եկեղեցականաց ներկայ վիճակը լաւցնելու և ապագայն անդորրելու և ազահոյցնելու միջոցները ձեռք բերելու հոգ տանել: Ազգային վարժարանաց երեքն երեքն այցելութիւն ընելով՝ Բրիտանական վարդապետութեան սուսցման վրայ հսկողութիւն ընել, արժանաւոր և բանիւրուն վարդապետներ և թանկաններ հասցունել, և Աղիկն մէջ ծագած կրօնական վեճերը ընկելով՝ Եկեղեցւոյ օրինաց համեմատ լաւցնել: Էօղ. 29. Կրօնական ժողովը երբ չի կարենայ ինքնին լաւել զօտ կրօնական կարեւոր խնդիր մը, Եկեղեցական համագումար ժողով կը կազմէ՝ կրօնական գործիքն գանձող Եպիսկոպոսները, Եկեղեցեաց բարոյիչ վարդապետները, Աւագերեցներն ու արժանաւորները, և թէ հարկ ըլլայ՝ նաև շրջակայ գաւառաց և Առաջնորդները հրուիրելով: Եթէ եկեղեցական համագումար ժողովն ալ խնդիր իր ձեռնհասութեան վեր դատէ, այն ժամանակ՝ Ընդհանրական կաթողիկոսին կը դիմէ ստորագրեալ տեղեկագրաւ:

(Շարունակելի)

Այդ վարժուն երիտասարդը, այդ գնահատուած դերասանը, Թովմաս Գասուրեանն էր, որ երկի, այսինքն բառուն տարի ետքը, մեր սենեակէն ներս կը մտնէ՝ բոլորովին հիւանդ ու տկար:

Տնօր կողմէն մին է այս, և եթէ գաղտնապահութեան վարագոյրը վեր առնել կը ներքեւ մեզի, պատճառը այն է, որ կողքին մանակից ընել մեր զգացած ցաւին, մեր զգացած արգաստահատանքին՝ «Նոր-Օր»ի բոլոր ընկերացիները:

Ցասուրեանեան հանդիպումի մարդը չէ. Գասուրեանեան անձնութիւն մը չէ. բառուն տարուան աշխատութեան կնիքը կը դրօշմէ իր ճակատը սրուն վրայ, աւա՛ղ, յոգնութիւնը, վշտերը և վհատութիւնը իր փոքր աչիտած են ժամանակէն շատ առաջ՝ ներթափանց նեղութիւններէ աւելի իր միտքը մտնցնող և իր կուրծքը կրծող ցաւը թերևս իր սիրած, պաշտած ապարկելին ճայլուած է, թատերական բեմին կործանումը և թատերասիրութեան անկումն է:

Իրեն ի նպատակ արտելիք ներկայացումի մը զազափարը շատ չի ժպտիլ իրեն, անոր յաջողութեան վրայ հաւասար չունի և նայն իսկ եթէ ունենար՝ զինքը ինամոլը բերնէն բերնէն և բազմաթիւ համակրողները չի պիտի թողարտեր իրեն իր այդ տկար վիճակին մէջ բեմ ելնել որ և է գեր մը կատարելու համար:

Բարեբաղդարար, Գասուրեանեան՝ անձնուէր և իր տաղանդը գնահատող բարեկամներ ունի հոս, ասոնք գովելի ձեռներեցութեանք մը և ազնիւ զգացումէ մը զրդուած՝ հանդանակութիւն մը կազմակերպած են սրուն արդիւնքով այդ ժամօթ դերասանապետը կարող պիտի ըլլայ կոպկաս ճամբորդել ուր, արարակայ չունինք, առողջութիւն և յաջողութիւն խթան կուտանն:

Ցասուրեանեան նորեկ մը չլիտի ըլլայ կոպկաս համար, որ թատրոնին հիմնած և իր տաղանդին ամբողջ թափովը կրցած է համակիր ժողովը պահանջութիւն վաստիլ:

Հայ արուեստագէտի վախճան՝ ցաւի չէ այս:

Փոխանակ ըստանաւմնայ դրօշմունքութեան փոխարէն յորեքանով մը վարձատրուելու, ստիպուել հանդանակութեան դիմել, չէ, մարդու սիրտը կը յագուի, երբ կը մըտած է թէ այդ գոյարգութեան պատճառը դերասանէն աւելի հասարակութիւնն է, որ իր պարտականութեան գիտակցութիւնը չունի տակալին:

Այս առիւթը զորը ընթերցողներուն բարեկամացողութեանը յանձնարարելով այդ անունին դերասանը, կը սիրէ յուսալ թէ շատեր գտնուին որ պիտի փութան մասնակցիլ այդ հանգանակութեան, իսկ արուեստին և ի բաշխելութիւն բազմաձայն դերասանին:

Յ. Ա.

ԻՍՄԱՅԻԼ ՔԵՍԱԼ ՊԵՅ Ի ՎԱՀԻՐԷ

«Ան բոլորի էօրիքս իմ» իմ բարագրապետ Գ. Շառլ Թափիէի՝ Երիտասարդ Թուրքերու պետերէն՝ իմայիլ Քէմալ պէյի վրայ հետեւեալ շառիկով ստղծողը կը գրէ իր Մարտ 15ի թուոյն մէջ, զորն թարգմանաբար կ'արտաստուեն:

Ասկէ 6իշ բառուն տարի առաջ Պոլսոյ ծածօթ ճաշարանագետներէն Միլիթ Թոքաթլիեանի Սոյալեթիսի մէջ հանդիպեցայ իմ մէկ պատուական պաշտօնակցին՝ Պարոն Փիլի Ս...ի օր Ֆրանսական հեռագրական գործակալութեան մը թղթակցին:

— Երբէք Տրիպոլի գացած էք:
— Այո՛, խիտ գեղեցիկ քրիտ մըն է...

— Նորէն երթայ կուզէք:
— Առ այժմ ոչ: Բայց Ինչպէ՛ս կը հարցնէր:

— Որովհետեւ մէկը՝ Ֆրանսացի մը կը փնտռէ օր լաւ ծանցայ Արիփիէն և մասնաւորապէս Տրիպոլիտը:

— Ո՞վ է այդ մեկը:

— Ետքը կ'ըսեմ, եթէ երբէք պայմաններս ձեզի յարմարին և եթէ երբէք կ'արտօնէք ինձի ձեր կողմէ՝ բանակցութիւնները սկսիլ: Այն պարագայի մէջ, գիտաւորութիւն ձեզի օգտակար ըլլալ է:

— Ես ալ, սեզածուգ պէս ըրէք, ես բոլորովին դատահ էմ ձեր վրայ:

Երկրորդ օրը ամեն բան հասկացայ: Աշխատակից մը կը փնտռուէր իմայիլ Քէմալ պէյի օր Սուլթանին հրահանով վաղի կարգուած էր Արիփիէան Տրիպոլիտը:

Իր մեկնումը մտաւարտ էր, միայն տանական շօքանուի մը վերադարձին կ'օգտուէր, որ սեխառայնեայ փոխադրութեան համար կարմիր ծոզուն մէջ կը գտնուէր այդ միջոցին:

Իր հետ տեսակցութիւն մը անհրաժեշտ էր, հետեւեալ իմայիլ Քէմալ պէյի խօսակցութիւնը:

Սկիզբէն ներս մտնելու պէս, սեղանի մը վրայ զարմանօք տեսայ փոռակազմ Աստուածաշունչի մը գոյութիւնը:

— Ի՞նչ յետոյ պէյը վար իջաւ:

— Եստ շատ վաթսուս տարեկան կար իմայիլ պէյ, մտքը ճերմակաւ վրայ էին, և ղեկին վրայ անկեղծութիւն մը և բանիմացութիւն մը կարող դիւրին էր: Հիմա ինչ կերպով Ֆրանսերէն կը խօսեր:

Սովորական բարեկամներէն ետքը, իսուրը Տրիպոլիտի վրայ բերաւ:

— Որքան ժամանակ հոն ապրած էք:

— Բաւական ամիսներ, Պէյ:

— Անշուշտ շատ բան չէք գիտեր այդ երկրին վրայ:

— Եստ բան անոյ սակայն, օրինակի համար նաեւ հանգստի խնդիրը...

— Արիկայ հին խնդիր մըն է, սակայն ատով ալ պիտի զբաղիմ:

— Անշուշտ պիտի հեռաբերուիք նաև Հաստատակաց պարտէկին թրամուկի խընդրով ալ:

— Արիկայ այդքան կարեւոր չէ:

— Գաղափար սենիմ նաև թաճուրայի օվախսին և ջրաբաշխական գործերու վրայ:

— Հո՛մար:

— Այո՛, Լէքիտ Մանեայի աւերակները:

— Բայց Տրիպոլիտը ինձմէ լաւ կը ծանցնուր կոր:

Եւ այսպէս երկար բարակ իրակցեցանք: Երկրորդ անգամ հոն երթալու, Պէյին աղօքը հետ ծանօթացայ, սեսայ նաև իր ընդարձակ մտանադարձը օրուն մէջ հարիւրաւոր գրքեր կային՝ պատմական, աշխարհագրական, ըտղաքական. տնտեսական, դիտական և հանցարանական գործեր ամենքն ալ:

Բե՛մալ պէյի քարտուղարներէն մին իմ արամադրութեանս սակ դրուած էր, և արտօնութիւն արուած էր ինձի սեզած գիրք տանել մտանադարանէն:

Եւ այսպէս այցելութիւններս կը շարունակուէին, օրունց միջոցին Պէյը մեծ բարեկամութիւն մը կը ցուցունէր ինձի, մասնաւորապէս այն օրէն ի վեր ուր իր խոսակցին մէջ հանդիպեցայ իր մէկ զինուորական ազգականին, որուն հետ 1895ին Տրիպոլիտի մէջ բարեկամացած էի:

Ետքով օր մը, վերջի այցելութիւնս էր այդ, իմայիլ պէյ ինձ ըսաւ թէ Սուլթան-

նէն հրահան արած էր պիս միատեղ սանիլ թարապուր-Ղարայ:

Անմիջապէս պիտի մեկնէինք: Քանի մը ժամ ետքը իմացայ թէ իմայիլ պէյի հրահան եկած էր ներկայանալ Նարին Բարձրութիւն Սուլթանին:

Ետքը չորեքշաբթի խոսիվական ընկերութեան Երկրպետս պաշտօն մէկ շոգնաւոր մէջ կը գտնուէի, Տարտանէները անցնելուս մէջ ետքը, կամըջակին վրայ դեմ ելաւ իմայիլ պէյ իր երեք զաւակներով օրոնց կը հակեր այն քարտուղարը օրուն ներկայութեանը սեզած գիրքերս կ'առնէի Գուրու-Չէմէի գրադարանէն:

Իմայիլ պէյ անգլիական պահակաւորներէն մէջ ապաստանելէն վերջը՝ հիմայ Երոպայ կ'ուղևորէր: Ատուանց շատ կանախ Ապտիլը Համիտի պալատը կ'անուանէր զանոյց, նախընտրած էր Երոպայ ճամբան բռնել:

«Թեփիլը-Ռայպանի» շոգնաւոր վրայ շարունակ խօսեցանք: Իմայիլ պէյ ընկաւ, և հարէն խօսեցաւ թուրքի մասին ինչպէս նաև բարենորոգութեան: Բայց կարծես սեզածին չափ համարձակօրէն չէր կրնար խօսիլ, մինչև այն ատեն որ՝ Բիրէ հասնելով, շոգնաւորի մը, սրուն մէջ Աթէնքի անգլիական հիւպատոսարանի մէկ կարծոր պաշտօնեան կը գտնուէր, եկաւ զինքը ցամաք հանել, իրեն հետ նաև զաւակները, ծառաները և քանի մը կտոր գոյքեր:

— Մնաց բարով, ըսաւ ինձի, փարթիկ կ'երթամ կոր և անկէ Լանտոն պիտի անցնիմ:

— Յետեւութիւն յեղիպոսոս, յարցի:

— Այո՛, թերես եկող տարի:

Եւ այս ամենը կատարուեցաւ. հիմայ ընչ մը մեղամարտութեամբ աչքիս առջև կը պատկերանայ Գուրու-Չէմէի Եւլլըն, ուրկէ ներս մտնելու համար սրածայր քարերով սալայատակուած գետիկներէ մը անցնելու է. միտքս կուգայ գետնայարկի հինկէկ ցնդամուղի սեղանը, վիտագրուած պատկերներ պատերն ի վար կախուած սալնին, որուն պատուհաններէն կը տեսնուի միւս պաղտով վրայ, կը վերջելով զուարթ ղեմքի ժիւլ Ս... պաշտօնակցին, օրուն ձեռքը չի կրցայ սեղանի մեկնած պահուտ և որ Պոլսոյ մէջ սրել շատերու նման կը կարծէ եղբի թէ, իմայիլ պէյի փախուտին մէջ ես ալ մաս առնելի. ահա ինչպէս կը գրին պատմութիւնը:

ԻՍՄԱՅԻԼ ՊԵՅԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Այս առաւօտ ժամը 9ին մեր սնօրէնը պատիւ ունեցաւ ներկայանալու այդ թուրք նշանաւոր պիւնարակտին, որուն հետ հետեւեալ իրակցութիւնը ունեցած է:

— Ուրախ եմ, Պէյ, որ զեք ողջ և առողջ կրկին անգամ տեսնելու բազմ կ'ունենամ:

— Ենորհակալ եմ, նայնպէս ես ալ շատ զոհ եմ որ ձեր այցելութիւնը կ'ընդունիմ:

Եւ երբ իր նախաձայր կ'ընէր, անգլիացիներու նման՝ կարագով, հացով և թկլախան կաթով, հին յիշատակներու վրայ իրակցեցաւ պահ մը:

— Ենորհակալ եմ, զաւակներս ալ աղէկ են, երկուքը Պրիւսիլի մէջ զարոց կ'երթան, երրորդը ուղեց ինձի ընկերանալ Երիպոստի մէջ ըրած ճամբորդութեանս մէջ, զոր իրեն պարզ զրօսաշրջիլ պիտի կատարեմ և որմէ յետոյ սեղանի Պրիւսիլ պիտի վերադար-

նամ: Աղերանդրիան աչքս չի խածա, բայց Գաշիկըն, օ՛հ, Գաշիկըն զմայելի է: «Երկուշաբթի խիկոն հաս հասայ, կաշարանին մէջ շատ մը բարեկամներ գաւրտեանս կ'աւակէն. առնոց մէջ նշմարեցի Շէն Ալի Լուսուֆը, «Մուսաբառ»ի անուկը, որ իր անձնա՛ան կառքով զիս Օ՛մէլ փոխիմանիմալ առաջնորդեց: Բայց շատ պարմայայ երբ հետեւալ օրը իր թերթին մէջ իմ վրաս գրած պաշտօն կ'ըսէր թէ «շատ անգլխակար եմ ե թէ կ'ատեմ Ֆրանսան» ինչ մեծ սխալ. բնոջա՛ւտաւ կը Ֆրանսան շատ կը սիրեմ... Ինչպէս ՚ան Ֆրանսացիները, չեմ գիտեր թէ կա՞յ արդեօք մէկը՝ բնկնում ապրիտ մէջ, որ ինձի պէս պարտաւոր չըլլայ սիրելու այդ մեծ ազգը, որովհետեւ, ինչպէս զտեք, ազատութեան գաղափարները Ֆրանսացիները չեն որ մեզի ներշնչեցին:

Բայց այսու հանդերձ՝ շիտակը գրուցելու համար պէտք է խոստովանիմ թէ՛ չեմ սիրեր Ֆրանսայի արդի բարեկամները որ այդ մեծ երկրը՝ Ռուսիոյ պէս ազգի մը պոչին կը կապէ, Բուսերը՝ որ երբէք մեր համակրութիւնը չեն վատաբերած:

Ռուսիոյ նորաստիւր Արեւելքի մէջ Գաղղիոյ տեղը բռնել է, ասիկայ գիւրդն է տանել:

Հետեւաբար «Մուսաբառ» կը սխալի, և կարծեմ թէ իրատեւր ունիմ ընտազատել պետութեան մի բնած բարեկամութիւնը, ինչպէս կը ընտազատեմ արդի վարչութիւնը եւ հայրենիքիս զոր ամեն բանէ տակի կը սիրեմ:

—Էւ անշուշտ Ֆրանսայի մէջ պիտի գտնուի նոյն իսկ Ֆրանսացիներ որ ձեզ պէս կը մտածեն:

—Անտարակցայ, նոյն իսկ կ'ըսեն թէ Պ. Տէրբառ, իր գգաշունչներու հակառակ կերպով հակառակ ազդութեան մը կը հետեւի, բայց անտազդութեան ըլլալու վախը կ'ստիպէ ձեր պետական մարդերը, ձեր պետականագետները և ձեր հրատարակագիրները իրենց մտածածին հակառակը գործել: Ես անգամ փարիզ գտնուած միջոցներու, ձեր բարեբազաններուն զիտել տուած եմ թէ իրենք ալ մեր Պարսոյ պետականներուն կը նմանին, որոնք սակայն երբեք բաշտութիւնը կ'ունենան Սուլթանին երեսն ի վեր ըսել բաներ՝ որ շատ անգամ հասնել չեն խալիֆային. բայց Ֆրանսայի մէջ անտազդութեան ըլլալու վախը տակի խոտապահանջ է բուն մեր վախմանը:

... Այո՛, Լարո Բրամբըրը և Ղազի Մուխթար փաշան տեսայ:

Եիտակը չեմ գիտեր թէ որքան տան պիտի մետ Գաշիկը. Երէկ Անգլիոյ հիպատատարանէն վերադարձիս Գասր-Կ-Նիլի կամա ըջը տեսայ: Պէտք է որ ամեն լան տեսնամ:

Երէկ իրիկուն մինչև կես յիշեր տղան հետ փոխիմանիմալ Օթէկին պարահան, գետին ներկայ գտնուեցայ, այսօր ալ շատ մը այցելութիւններ ունիմ ընկելը:

—Կը ներքը որ երբեք երբեք այցելութիւն տամ ձեզի:

—Ինչպէս չէ, միշտ հաճոյքով տեսնել պիտի ազնւ գնեք, Պ. Թափիլ:

Երբ փորձեցի հասնիլ թէ արդեօք նորէն Տրեպոլիս երթալ կուզէր, որ այնքան մեծ ծրարներ ունէր գործադրելը, Իսմայիլ պէյ իրիկ պատասխան՝ անորոշ շարժում մը բրաւ որ կարծես կը նշանակէր — Խըլալէր:

Ա. Զ. Գ.

Եղիպտոսի, Արամասահմանի և Կովկասի արդոյ բաժանորդներէն անոնք որ մինչև ցարգ վճարած չեն իրենց բաժանորդագրիւնները, կը ինքրաւ որ հաճին անորոշող վճարել:

Եղիպտոսի բաժանորդները կրնան Ի՛մանա-Ֆուլթայ պարիկը իրենց բաժանորդագրիւնները. թերթիս վերջը նշանակուած հասցէին:

ՎՈՐՁԷ՞Ք ԲԱՂԳԵՐՆԻ՞Ք ՓՈՐՁԵՆ

Մենք քեզ ժողովրդական Տարեցոյցէն հաստ մը: ար շատ մէջ զուարճայի և օգտակար հատուածներու հետ կը պանուր նաեւ պեղեցիկ բարեօրոյց մը պէտք եղած յայտարարութեամբ:

Սոյն Տարեցոյցէն և Պարզ Օրացոյց զնէլ փոփոխութիւնը հաճին զիմել տա Տ. Օճան Խոտածեան, որ պատրաստ է արիշ ամէն տեսակ գրքերու մասին յանձնարարութիւնը փոխով կատարել փոփոխութիւնը Տարեցոյցի և Օրացոյցի մասին եղած յանձնարարութեան համար գրածի տեղ թերթիս լոպրոյմ կընդ տեսի:

Տարեցոյցին գինը 40 Դր. պլ
Պարզ օրացոյցինը 2 ..

Ա. Զ. Գ.

Շատերու կողմէ յայտնուած փափաքի մը գոհացում տալու և մեր ընթերցողներու զի բարձրին մը ընձայելու նպատակով, այսուհետեւ մեր թերթը հատով պիտի ծախուի Եսրա Ազա-Է-Աղիի սկիզբը Պ. ԿԱՐԱՊԵՏ ԵՐԶՆԿԱՅԵԱՆԻ խոնարհ ինչպէս նաև Գլխի-Ղէ. փոփոխութիւնը և լըրումքէնիբու. կայտարանին մաս ծրարածառ Պ. ՄԱՐՏԻՐՈՍ ԳԱՍՏԱՆԻ քով:

Le Gérant J. MUNIER

ՊԱՆԳ ԼԻՍՆԷԶ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱՆ ԵԳԻՊՏՈՍԻ Մ. ՍՍՏՈՅՆԱՆ

Ի՞նչի հանրածանօթ գրամատուներ, այս անգամ ունեցաւ իր Եղիպտոսի զարմակաւն ալ, Տ. Միքայիլ Մասոյան, որ իւր հրատարակային ցայց սուած պարկեշտ գործունէութեամբն ամենուս փաստաւթիւնը կը վայելէ:

Սոյն գործախալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և իրենի բարգաւառութեան պաշտօնագէտ փաշտարարութեան համար ձայն, պիտի կատարէ Պանդ լիւնիցի միջոցաւ. ամեն տեսակ գրամական և փետի Ֆոնտիլէի, վիլ տը Բարբի և Գաղղիական ամէն արժեթուղիներու գործողութիւններ, գտնաւթներ վաճական չնչին գումարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի. քիչ տանէն, պահեստի բաժնեթուղի մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած:

Փոփոխութիւնը հաճին զիմել Նիւպտի վրայ փաստարան Ռարթարիի գրասենեակը:

Թղթակցութիւն և կամ գրամ զըրկել հետեւալ հասցէին:

Մ. ՍՍՏՈՅՆԱՆ Ի ԳԱՆԻՐԷ

ԱՍՍՆԱԲՈՅԹ Պ. ՆԻԿՈՒԻՍՏՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գահիէ տը ըս Պարսի կէր, Բ. յարի թիւ 9 գտնիմը:

Կը լծկէ բերնի և տիւոյի ամեն տեսակ հիւանդութիւնները: Աղքատները ձրի կը գործունէ ամեն օր, առտու տեսն ժամը 8էն 9:

ՊԵՍԵՆ-ՇԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

ԸՆԵՐԿԵՆ ԳԵՐՄԱՆԵՐ ԲՐՆԵ ԵՒ ՏԻՒՆԵՐ ԵՒ ԶԵՆԿԻՒՅՈՒՄԵՐՆ ԳՊՐՈՑ

Ապսիկ մեծ պարտսոյի վրայ Տայիւայի Ապսիկի զիմացը, նախկին կիկիսական գործիկն ու վաճառատուը:

Վերջերս Ամերիկայէն հաս եկած հաստատուած բոլորով կը յայտարարեն որ այդ շատարակական թէ՛ պատրաստ եղբ գոհացնել մեզ գիւնոյ Պատ. յանձնարարութեան, գործի մարտութեան, գիւնրու. շափարարութեան և ձեռագրահա թեան կողմէն:

Մեր գործատուը սոյն մէջ կ'ատարուին նաև ձեռագրահա թեան գաւեր ամերիկեան ամերիկայի կատարելապարտուած մէթոսով:

Մանրամասնութեանը համար գիմել մեր գործատուին:

ՃԱՃԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

ՄԻՋՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԳԱԶՆԵՃԱՆ

Եսրա Ազա-Մասոյան Նիւս-Տիւնիսի գիւրտանի պիւսցը:

Օգտանն ու զուարճայի զիւր մտքուր ու փոյելուչ սպաս. համեղ ու անդարար կերակուրներու զանազանութիւն, անխարզ այն պատրաստութիւն. նոյն ճաշացոյցակ մը գիւրամաշիկի գիւնրով ա՛հա՛ Գաղանեան կը կարոյ ճաշարանը:

Ով՞ որ կ'ազէ, փոքրի համար մեկ անգամ թոյ գիմէ, փաստ պէտք է ըլլայ թէ մշտնապէս յանձնարող պիտի գտանայ հայրական ճաշարանին:

Տար. «Միւրիկն».— Պ. Ս. Փախազեանի


Տ Պ Ա Ր Ա Ն



Ի ԳԱՀԻՐԷ

ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ



ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

Սոյն նորակալով տարածին մէջ կը տպուին հայերէն ու երոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթներ, յարտարարութիւններ, շրջարեակամներ, այցեառներ, մահազգեր, հարտանայ հրատարակողը, կանոնադրներ, նամակաղրութիւններ, օրհարաններ, հաշուեցուցակներ եւն:

Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, ամենայն խնամով և ճաշխարար սպագրութեամբ:

ԶՍՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ